ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Մեծ թափով և ուշադրությամբ առաջ են տարվում Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքները։ Մի խումբ նկարիչներ և նկարչուհիներ, ղեկավարությամբ մանրանկարչության հանրածանոթ մասնագետ Լ. Ա. Դուռնովայի, գիշեր ու ցերեկ աշխատում են Մայր Կաթուղիկեի Նաղաշ Հովնաթանյան նկարազարդերը վերականգնելու, մինչ հայ վարպետներ, հայ երևելի ինժեներների առաջնորդությամբ, ցեմենտով ու երկաթով ամրացնում են հսկայական սյուներն ու լուսավորչահիմն խարիսխները։ Ուրախալի է տեսնել, որ Մայր Տաճարի շինարարական աշխատանքներով անձամբ հետաքրքրվում են Հայաստանի ամենանշանավոր ճարտարապետներն ու նկարիչները։ Նրանք հաճախ այցելում են Ս. Էջմիածին ու հայտնում իրենց հեղինակավոր կարծիքը, որպեսզի համայն հայության պապենական հավատքի սուրբ խորանն եղող դարավոր Մայր Տաճարը լինի հավերժորեն հոյակապ ու փառաշուք, մշտընջենապես անսասան և անխորտակ։ Միևնույն նպատակին են ձգտում նաև Մայր Տաճարի արտաքին մայթերը սալահատակող հայրենադարձ ջեբել-մուսացի վարպետները, երբ սրբատաշ սալաքարերը ցեմենտով հաստատում են մեծահամբավ հայրապետների կոխոտած սրբասուն գետնին։

— Ըստ ճարտարապետների հավաստիացման, հազար տարով ևս երկարաձգված է Մայր Տաճարի տասնվեց ու կես դար ապրած կյանքը,— ասում է Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը և օրհնում ամենայն հայոց Մայր Եկեղեցու ֆիզիկական գոյությունն ապահովելու համար նյութական միջոցներ շնորհող մեր իմաստուն կառավարությունը։

***

Ինչպես Հոգեգալստյան տոնին (5 հունիսի), նույնպես և Ս. Հռիփսիմեի տոնին (6 հունիսի), Ս. Գայանեի տոնին (7 հունիսի), Ս. Շողակաթի տոնին (9 հունիսի), Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապից ելքի (11 հունիսի) և նշխարների գյուտի (25 հունիսի) տոներին սուրբ պատարագ մատուցվեց համապատասխան տաճարներում, որոնք լի էին հավատացյալներով։

Աչքառու հանդիսությամբ տոնվեց Կաթուղիկե Ս. Էջմիածնի տոնը (12 հունիսի) Ս. Հռիփսիմեի տաճարում։ Պատարագիչն էր Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Օրվա տոնից ներշնչված գեղեցիկ քարոզ խոսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը՝ վեր առնելով Ս. Էջմիածնի կարևոր դերը։ Քարոզի վերջում Նորին Սրբազնությունը բարեմաղթություններ արեց Մայր Աթոռի վրայից սուգի քողի շուտով վերացման և Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության համար։